

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՐԱԿԱՆՔ

Շր. 21 Սեպտ.- Ծնունդ Ս. Աստուածածնի իյԱննայէ: Առաւօտուն Տ. Կիրեղ եպս. Գաբիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով մօտօ գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Սրբազանը:

- Յաւարտ երեկոյեան ժամերգութեան՝ կատարուեցաւ Գոհարանական Մաղքանի վանքի տարեդարձի Հայաստանի Հանրապետութեան, Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 22 Սեպտ.- Բարեկենդան Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան:

Շր. 28 Սեպտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Դանիէլ Քիւնյ. Գարանեան:

- Խաչվերացի Մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, հանդիսապետն էր Պատրիարք Սրբազան Հայրը, որ կենաց Փայտի Մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

- Իրիկեանդէմին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեցե՛ք»ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 29 Սեպտ.- Տօն վերացման Ս. Խաչին (629): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ փարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը: Սպասարկող վարդապետներն էին Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան եւ Տ. Էմմանուէլ Արդ. Աթաշանեան:

«Հայր Մեր»էն առաջ Տ. Կիրեղ եպս. Գաբիկեան նախագահեց Կարապետ եւ Գրիգոր Մելիոնեան բարերար եղբայր հոգիներուն համար, նաեւ Ազգային բարերար Տէր եւ Տիկին Ալեք եւ Մարի Մանուկեաններու համար կատարուած հոգեհանգստեան կարգին:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած Խաչվերացի մեծ «Անդաստան»ին:

Բշ. 30 Սեպտ.- Յիշատակ Մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Տ. Շնորհիք Ծ. Վրդ. Գասպարեան:

Շր. 5 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնատան մատուռին մէջ:

Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 6 Հոկտ.- Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ եպս. Գաբիկեան: Ժամարարն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոյքանեան:

Ուր. 11 Հոկտ.- Ս. Գեորգի նախատօնակը պաշտուեցաւ Դպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Դարիպեան:

Շր. 12 Հոկտ.- Ս. Գեորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ դպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Բագրատ Արդ. Պուրեւեան, որ նաեւ փարոզեց:

Երթուղարձի թափօրները գլխաւորեց Տ. Սեւան եպս. Դարիպեան: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ դպտոց վանքի Հոգշ. Տեսչին:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մօտօ գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը, մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 13 Հոկտ.- Վարագայ Սրբոյ Խաչին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան, օրուան Ս. Պատարագը մատոյց եւ փարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Շր. 19 Հոկտ.- Սրբոց Եօթնասուն եւ երկու աշակերտաց Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին զաւթին մէջ գտնուող Ս. Գեորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սահակ Արդ. Մաշայեան:

Կիր. 20 Հոկտ.- Այսօր կատարուեցաւ Ռամէլէի Ս. Գեորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Երուսաղէմի, Եաֆայի եւ Հայֆայի հայութեան կարեւոր մէկ մասին:

Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Պատարագեց եւ փարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

- Նոյն օրը Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աշակողմեան դասին Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաշանեան:

Ուր. 25 Հոկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 26 Հոկտ.- Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Տ. Կիրեղ Եպս. Գաբրիելեան նախագահեց Կիւլպէնկեան Գերդաստանի անդամներուն (Գալուստ, Նուարդ, Սարգիս Տիրուհի) հոգիներուն համար կատարուած տարեկան հանգստեան պաշտամունքին:

Կիր. 27 Հոկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արք. Բարսեղեան: Հանդիսապետ Սրբազանը «Հայր Մեր»էն առաջ քարոզեց:

Շր. 2 Նոյ.- Ս. Զորից Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին վրայ քաջուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: Ժամարարն էր Տ. Եզրաս Քհնյ. Պոկտան:

Կիր. 3 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէքեան:

Բշ. 4 Նոյ.- Ս. Յովսէփայ Աստուածածնին: Ըստ սովորութեան, Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան պատարագեց նոյն Տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

Շր. 9 Նոյ.- Ս. Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիւտի ուխտեւէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տճօրինակն Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

Կիր. 10 Նոյ.- Գիւտ Խաչի (326) Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Հոն եւս մատուցուեցաւ Ս. Պատարագը: Ժամարարն էր Տ. Մեսրոպ Աւագ

Քհնյ. Ժամկոչեան, որ Բարիգէն ուխտաւորաբար երուսաղէմ կը գտնուէր ի գլուխ 40 հայ ուխտաւորներու: Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր նախ Գիւտ Խաչի Այրը եւ ապա Ս. Գերեզմանի շուրջ երիցս, եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը կը գլխաւորէր Պատրիարք Սրբազան Հայրը, ամպհովանիի տակ եւ կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի Քո Քրիստոս» տաղի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան, թափօրով Ս. Գրիգոր Լուսաւորիչ իջնելով: Կէսօր էր արդէն, երբ Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք, փակելով 1996 տարւում Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շարքը:

Շր. 16 Նոյ.- Ամենայն Սրբոց, Հնոց եւ Նորոց, Յայտից եւ Անյայտից: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արք. Ջաֆարեան:

- Յետ միջօրէի Կիրակմտից ժամերգութեան աւարտին, Սրբազան Պատրիարք Հայրը Գպրութեան Զորս Աստիճան շնորհեց ժառանգաւորաց Վարժարանի 12 սաներուն, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, խարտավիլակութեամբ Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի:

Կիր. 17 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կիրեղ Գաբրիելեան: Ժամարարն էր Տ. Ջաֆարիա Քհնյ. Սարիքէկեան:

Ուր. 22 Նոյ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 23 Նոյ.- Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Դանիէլ Քհնյ. Գարանեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ Ս. Աթոռոյ քարերարուհի Աղանի ձէվահիրեանի եւ անոր պարագայից համար հոգեհանգստեան պաշտօն: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Կիր. 24 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ դարձեալ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան:

Հոգեհանգիստ կատարուեցաւ Հայոց Բարեսիրական Միութեան հանգուցեալ անդամ անդամուհիներուն հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շր. 30 Նոյ.- Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրնէեան:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆՔ

Գշ. 1 Հոկտ.- Երուսաղեմի էհուտ Քաղաքացիության Օլմերի կրթական, Տաղաճարահարաց տոնին առիթով Դաւիթ Բերդի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Տ. Աւետիս Արդ. Իփրանեան եւ Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

Եշ. 17 Հոկտ.- Նորին Սրբութիւն՝ Յովհաննէս Պօղոս Երկրորդ Պապի Հայրապետութեան տասնըութերորդ տարեդարձին առթիւ կատարուած պատարագին եւ ընդունելութեան նոթք Տամ կեդրոնին մէջ, ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 20 Հոկտ.- Երուսաղեմի Ասորւոց Գերշ. Մար Սեւերիոս Մալքի Մուրատ (Պատր. Փոխանորդ Ասորւոց) եպիսկոպոսին ժամանման ընդունելութեան ներկայ գտնուեցան յանուն Պատրիարքութեան Տ. Սեւան Եպս. Դարիպեան, Տ. Թեոդորոս Արդ. Զաֆրեան:

Բշ. 21 Հոկտ.- Մարօնիք համայնքի նորընտիր Եպիսկոպոս՝ Պուլոս Սայեղի Երուսաղեմ ժամանման առթիւ. բարի գալուստի գացին, Մարօնիքներու վանքին մէջ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոհանեան եւ Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէսեան:

- Նոյն առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Բարգէն Մ. Վրդ. Անուշեանի, Թեմրփայ Նիւ Ճըրգիի Ս. Թովմաս Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը, որ Երուսաղեմ ժամանած էր Հոկտեմբեր 14ին, մեկնեցաւ Նիւ Եօրք, հրաւերովը Միացեալ Նահանգաց Հայց. Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի առաջնորդ Տ. Խաժակ Արք. Պարսամեանի եւ Թեմական խորհուրդի, նախագահելու համար Դպրաց Դասերու Ընկերակցութեան 50 ամեակի համագումարին եւ հանդիսութեան:

- Նոյն օրը Իսրայէլի նախագահին՝ Էզր Վալզմանի կողմէ տրուած ընդունելութեան, ի պատիւ Յրանսայի հանրապետութեան նախագահ Ժաֆ Շիրաֆի, ներկայ գտնուեցաւ յանուն Պատրիարքութեան Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Գշ. 22 Հոկտ.- Յրանսայի Հանրապետութեան նախագահ՝ Ժաֆ Շիրաֆ Ս. Յարութեան Տանար այցելութեան առթիւ, Տանարի մուտքին ընդունուեցաւ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներուն կողմէ. Յանուն Պատրիարքութեան, ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան, եւ Տանարի հայոց բաժնի տեսուչը՝ Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան:

Եշ. 24 Հոկտ.- Իսրայէլի Վարչապետ Իսաակ Ռապիին մահուան առաջին տարեիցի առթիւ կատարուած ռեկոնստրուկտիւ հանդիսութեան Գնէտէթի մէջ ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 26 Հոկտ.- Քաղաքացիապետարանի պաշտօնեայ, Քրիստոնեայ համայնքներու հետ կապերու պատասխանատու Նոյեմի Թիստէլի հանգստեան կոչուելուն առթիւ, ի պատիւ իրեն տրուած համերգին Տորմիշընի եկեղեցւոյ մէջ, ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 27 Հոկտ.- Պաշտպանութեան նախարարին կողմէ, Թէլ-Ավիվի մէջ, Իսրայէլի վարչապետ՝ Իցհազ Ռապիին սպանութեան առաջին տարեիցիին առթիւ կազմակերպուած ռեկոնստրուկտիւ հանդիսութեան, ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 31 Հոկտ.- Բարեկարգութեան օրուայ առթիւ, Երուսաղեմի Աւետարանական Լուսերական եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած պաշտամունքին, ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեան:

Գշ. 5 Նոյ.- Պատրիարք Սրբազան Հայրը Ս. Աթոռ վերադարձաւ դէպի Նիւ Եօրք իր ճամբորդութենէն: Իսկ Տ. Բարգէն Մ. Վրդ. Անուշեանը՝ 7 Նոյեմբերին:

Եշ. 7 Նոյ.- Երուսաղեմի Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ նոր ժամանած Հոգեւոր Պետը՝ Տ. Սեւերիոս Մալքի Մուրատ ընկերակցութեամբ իր հոգեւորականներուն, իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարք Սրբազան Հօր որ երկու օր առաջ վերադարձած էր Նիւ Եօրքէն:

Գշ. 20 Նոյ.- Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեան բանի մը անդամներով գնաց Ասորւոց վանք Գերշ. Մար Սեւերիոս Մալքի Մուրատ եպիսկոպոսին բարի գալուստի:

Եշ. 21 Նոյ.- Ասորւոց Ս. Մարկոս Վանքին մէջ ի պատիւ նոր ժամանած Տ. Սեւերիոս Մալքի Մուրատ եպիսկոպոսին տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 25 Նոյ.- Մարօնիք համայնքի նոր նշանակուած Պատրիարքական Փոխանորդ Տ. Պուլոս Նապիլ Սայեղ եպիսկոպոս իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարք Սրբազան Հօր:

Շր. 30 Նոյ.- Սկովսական Սենթ Էմերուկ (Ս. Անդրէաս) եկեղեցւոյ տօնին առիթով հոգեւոր հովիւ Բոլին Մորթոնի կազմակերպած կրօնական արարողութեան եւ հիւրասիրութեան, ներկայ գտնուեցան Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: